ՄԱՐԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան
գրականության ինստիտուտի հայցորդ
ՀՏԴ 821.19.0

ԱՐՑԱԽԸ ԶՈՐԻ ԲԱԼԱՅԱՆԻ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՄ

Բանալի բառեր և արտահայտություններ. հրապարակախոսական արձակ, համապատկեր, հետագիծ, աշխարհայեցողություն, պատկերամտածողություն, խորհրդանշական, հայրենի եզերք:

Ключевые слова и выражения: публицистическая проза, панорама, траектория, мировоззрения, образное мышление, символичный, родной край.

Key words and expressions: publicistic prose, panoram, trajectory, world outlook, symbolic, motherland.

Յուրաքանչյուր գրողի համար «սկզբունքային նշանակություն ունի կենսական նյութի ընտրությունը, որն անհնարին է առանց կյանքի լավ ճանաչողության և ստեղծագործական վերաբերմունքի. պետք է գտնել այնպիսի փաստ, այնպիսի անձնավորություն, որոնք ինքնին տիպական և նշանակալից լինեն կյանքի տվյալ բնագավառի համար»[1]:

Այս առումով անտարակույս է, որ գրողի համար «կենսական նյութի ընտրության» հիմնական «ավազանը», որտեղից նա ստեղծագործական ճանապարհի բոլոր հանգրվաններում կենսական լիցքեր է ստանում, իր ծննդավայրն է, հայրենի եզերքը՝ իր անկրկնելի գույներով ու երանգներով, մանկության տարիների հուշերը, որոնք անջնջելի հետք են թողնում ամբողջ կյանքում:

Հայրենի եզերքում ապրող մարդիկ են հետագայում ամբողջացնում գրողի ստեղծած կերպարների պատկերասրահը, նպաստում նրա կողմից ժամանակի զգացողության խորացմանը, որը «տեսական վերացություն չէ, այլ կեցության անհրաժեշտություն: Ի՞նչ ենք ժառանգել անցյալից և ի՞նչ ենք ստեղծում՝ գոյության իմաստն է սա, որ ստուգվում է նաև անհատի քաղաքացիական հետագիծը հասարակություն, պետություն, հայրենիք հասկացություններում»[2]:

---

[1] Ջրբաշյան Էդ., Գրականության տեսություն, Երևան, ԵՊՀ հրատ., 1980, էջ 358:
[2] Սարինյան Ս., Գեղարվեստական գրականության պատմականությունը, «Սովետական գրող», Երևան, 1979, էջ 292:

Հայրենի եզերքի մարդկանց, նրանց աշխարհայեցողության ու կենսակերպի գեղարվեստական արծարծումների միջոցով է գրողը փորձում «հայտնաբերել մարդ-հայրենիք միաձույլ խորհրդանիշը»[3]:

Զորի Բալայանի «կենսական նյութի ընտրության» «ավազանը» Արցախն է՝ իր դարավոր պատմությամբ, խորհրդային տարիների դժնդակ իրադարձություններով, անկախության շրջանի փառահեղ մաքառումներով:

Անգամ հեռավոր Կամչատկայում գրած պատմվածքներում, ակնարկներում, հուշագրություններում, հյուսիսի կյանքը պատկերող այլ ժանրերի ստեղծագործություններում զգացվում է արցախցի գրողի յուրահատուկ աշխարհընկալումը, արցախյան շնչառությունը: Եվ բոլորովին էլ պատահական չէ, որ գրողի ղեկավարած արշավախումբը կոչվում էր «Ղարաբաղ», իսկ արշավախմբի մասին գրված պատմվածքներից մեկն ավարտվում էր խորհրդանշական կերպով՝ «Ղարաբաղը» կորավ հյուսիսի մշուշներում»:

Խորհրդային տարիներին Զորի Բալայանն Արցախի համապատկերը ներկայացնում է մի դեպքում առանձին անհատներին, մի այլ պարագայում՝ այդ տարիների համար խիստ բնորոշ իրադարձություններին նվիրված հուշագրություններում, կենսագրական վավերագրերում, ակնարկներում, որոնց մեջ հրապարակախոսությունը տոգորվում է գեղարվեստականության շնչով, որը շարադրանքին հաղորդում է պատկերավորություն և հուզականություն:

Այս տեսանկյունից բնորոշ են ակնարկները, որոնց մեջ թեպետ «հեղինակի երևակայությունը «իրավունք չունի» փոխելու փաստերի հիմանական բնույթը, բայց այն ևս կարևոր դեր է խաղում: Առանց երևակայության ակնարկագիրը չէր կարողանա ջոկել երևույթի հիմնական օղակները, տալ տեղի ունեցած դեպքերի հոգեբանական պատճառաբանությունը, հերոսի ներքին խոսքը և այլն»[4]:

Այդ շրջանի ստեղծագործությունների կերպարները, ներկայացնելով առանձին անհատների կենսապատումի դրամատիկ ապրումները, մարդ-ժամանակ և մարդ-հասարակություն հակասական կապերը, խորհրդանշում են տոհմի, գերդաստանի, լայն առումով՝ ժողովրդի ողբերգությունը, որը վերաճում է հայրենիքից տարանջատված և արհեստականորեն օտարին բռնկված մի ողջ երկրամասի հայ բնակչության պատմության: Այդ պատմության էջերը լրացվում են նաև անկախության

[3] Գասպարյան Դ., Հայ գրականություն, Գ. 2, Երևան, «Զանգակ» հրատ., 2002, էջ 312:
[4] Ջրբաշյան Էդ., Գրականության տեսություն, էջ 359:

տարիների ստեղծագործություններում. «Մորս ճակատագրում, ինչպես հայելու մեջ, արտացոլվել էր ողջ Արցախի ճակատագիրը»[5]:

«Հաղթելով մահին» կենսագրական-հուշագրական գրքում ԳՈՒԼԱԳ-ի բոլոր պարունակներով անցած մոր՝ Գոհարի, աքսորավայրում մահացած հոր և բազմաթիվ մերձավորների կենսապատումի ռեալիստական պատկերներով Զորի Բալայանը ներկայացնում է ժամանակը բոլոր չափումներով՝ հաճախ խախտելով նրա՝ անցյալ-ներկա պայմանական սահմանները:

Մինչև Արցախյան ազատամարտը հրատարակած գրքերում («Բարության ծառը», 1986, «Դիմակայում», 1989, «Ճանապարհ», 1989, և այլն) Բալայանը տարածության ու ժամանակի միասնականության (քրոնոտոպ) համապատկերում ներկայացնելով իր հերոսներին՝ նրանց բնութագրում է որպես զարմանալիորեն հավատավոր ու արդարադատ, շիտակախոս ու անհանդուրժող, խստակյաց ու խստաբարո անհատականություններ, ովքեր, որտեղ էլ որ ապրելուց լինեն, պահպանում են արցախյան յուրահատուկ արժանապատվության բարձր զգացումը, հայրենի եզերքի նկատմամբ ունեցած անսահման սերն ու կարոտը:

Զորի Բալայանի «գրի ռիթմը էականորեն փոխվում է ազատագրական շարժման վերելքի տարիներին»[6]: Նրա ստեղծագործությունների առանցքում արդեն արցախյան գոյամարտի հերոսներն են. «Այն ամենը, ինչի մասին գրում եմ, անմիջականորեն կապ ունի պատերազմի հետ: Հայրենական պատերազմի, որ այսօր մղվում է Ղարաբաղում: Եթե նույնիսկ թվա, թե գրում եմ ֆրանսիական հեղափոխության մասին, իմ աչքերի առաջ միշտ այն տղաների դեմքերն են, որոնց ամեն օր հանդիպում եմ դիրքերում»[7]:

Այդ տղաներին հասարակական-քաղաքական զարգացումների, ռազմաճակատում տեղի ունեցող իրադարձությունների ընդհանուր համապատկերում հեղինակը ներկայացնում է «Դժոխք և դրախտ» գրքում, որտեղ թեև սյուժետային գիծն արտաքնապես հաճախ ընդհատվում է կամ առաջ ընթանում նոր ճյուղավորումներով, այնուամենայնիվ, պատումի բոլոր հանգույցները վերջիվերջո միավորվում ու բացահայտում են ստեղծագործության ընդհանուր գաղափարը:

Գրքում հեղինակի պատումը ծավալվում է ժամանակի շարժմանը զուգընթաց, որի հարահոսում էլ բացահայտվում են կերպարների

[5] Բալայան Զ., Հաղթելով մահին, Երևան, 2009, 371:
[6] Սարինյան Ս., Շարունակվող լեգենդ, Երևան, 2008, էջ 65:
[7] Բալայան Զ., Դժոխք և դրախտ, Երևան, 1996, էջ 13-14:

գործողություններն ու ճակատագրերը՝ նոր նրբերանգներով ներկայացնելով «դժոխային պայմաններում հայտնված դրախտային անկյան՝ Արցախի պատկերը»[8]:

Ճիշտ է, գրքում հանդես են գալիս կերպարներ, որոնք իրական մարդիկ են, սակայն դա չի խանգարում հեղինակին ժամանակի «ներփակ» և «բաց» սահմաններում նրանց ներկայացնելու գեղարվեստական տարբեր հնարքներով, հոգեբանական նուրբ ներթափանցումներով բացահայտելու նրանց խոհերն ու ապրումները, մեկնաբանելու արցախյան ոգու բացառիկության գաղտնիքը, փնտրելու մարդկային կերպի արցախյան տեսակը. «Ինձ համար ես վաղուց եմ պարզել, որ խոսքն այստեղ ոգու բաղադրիչների ամբողջության մասին է, որոնք ամուր միակցված են իրար»[9]:

Այդ բացառիկությունը գեղարվեստական վարպետությամբ է ներկայացված «Դժոխք և դրախտ» գրքի՝ Շուշիի ազատագրմանը նվիրված հատվածներում: Մարտերին մասնակցող հեղինակը քնարական ջերմ զեղումներով է ներկայացնում Արցախի գույներն ու երանգները. «Ոչ մի տեղ այնպես մութ երկինք ու պայծառ աստղեր չկան, ինչպես Ղարաբաղում: Ցանցով քողարկված ու արհեստական տերևներով ծածկված խրամատից ես շուտ-շուտ վերև էի նայում ու հիշում մանկությունս»[10]:

Գեղարվեստական հետաքրքիր հնարք է մարտի թեժ պահին, հրետանակոծության, տարբեր զինատեսակների համազարկերի խլացուցիչ աղմուկի մեջ համակվել մանկության տարիների հուշերով, սրտին «մոտ ընդունել գեղարվեստական այն պատկերը, թե ամեն մի աստղ ոչ թե պարզապես մարդ է, այլ մարդու ճակատագիր»[11]:

Բնութագրական նրբագծերով են ներկայացված Արկադի Տեր-Թադևոսյանի, Արկադի Կարապետյանի, շտաբի պետ Ֆելիքս Գզոյանի, նրա որդու՝ Արսենի կերպարները, ինչը մի անգամ ևս փաստում է, որ Զորի Բալայանի հրապարակախոսական արձակը բոլոր հիմքերը տալիս է այն գեղարվեստական գրականության համապատկերում համակարգելու և արժևորելու համար:

Մ. Մկրտչյան

Արցախը Զորի Բալայանի հրապարակախոսական արձակում

Ամփոփում

[8] Նույն տեղում, էջ 6:
[9] Նույն տեղում, էջ 6:
[10] Նույն տեղում, էջ 141:
[11] Նույն տեղում, էջ 141:

Զորի Բալայանի հրապարակախոսական արձակն աչքի է ընկնում գեղարվեստական մտածողությանը յուրահատուկ գծերով, կերպարակերտման ու պատկերաստեղծման յուրահատկություններով: Իրական մարդկանց կերպարների, իրական իրադարձությունների ստեղծման ու ներկայացման միջոցով Զորի Բալայանը յուրովի ներկայացնում է մարդ-ժամանակ, մարդ-հասարակություն հարաբերությունները՝ ամբողջացնելով Արցախի համապատկերը:

Մ. Մկրտչյան

Арцах в публицистической прозе Зория Балаяна

Резюме

Публицистическая проза Зория Балаяна отличается свойственными художественному мышлению чертами, особенностями создания образов и портретов. Создавая и представляя образы реальных людей и реальных событий, Зорий Балаян по-своему представляет отношения человек-время, человек-общество, придавая целостность панораме Арцаха.

M. Mkrtchyan

Artsakh in publicistic prose of Zori Balayan

Summary

Zori Balayan's publicistic prose is distinguished by its unique features of artistic thinking, character construction and image creation's singularities. Through character of real people and real events creation and presentation Zori Balayan introduces man and time, man and society relationships in his own way completing Artsakh's whole picture.